ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 888

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-0109-0018-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,052 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1667112 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06109LR2VMUS) և Նարեկ Արմոյի Մատինյանի (ծնված 16.11.1988թ) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրում գտնվող, 06-0109-0018-0006 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ, գյուղ Քարաձոր, 5-րդ փողոց, 6 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1825):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 889

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-030-0001-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,16 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 15112022-06-0010 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06030KPZ76QM) և Դավիթ Ավետիքի Դանիելյանի (ծնված՝ 22.09.1976թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0001-0006 կադաստրային ծածկագրով 0,16 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Գոգարան, 1-ին փողոց, 44 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1809):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 890

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0095-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,175 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1430026 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06052DQ4PVYD) և Սմբատ Սարգսի Մանուկյանի (ծնված՝ 12.05.1966թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող 06-052-0095-0001 կադաստրային ծածկագրով 0,175 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 147,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 86,30 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ, գյուղ Կաթնաջուր, 12-րդ փողոց, 3 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 891

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԼԻՊԱՐԻՏ ԹՈՐԳՈՄԻ ԴԱՐՉԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-0035-0014 ԵՎ 06-006-0035-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏԳՐՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Առափնյա թաղամասում գտնվող, 06-006-0035-0014 և 06-006-0035-0012 կադաստրային ծածկագրերով 0,05344 և 0,053 հեկտար մակերեսով հողամասերի վրա 2021 թվականին կառուցված մառանի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22042021-06-0042 և թիվ 08102015-06-0007 վկայականները, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 202255WHPZGJ, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված

եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006DN8Z3H2) և Լիպարիտ Թորգոմի Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին (ծնված՝ 02.01.1963թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Առափնյա փողոցում գտնվող, 06-006-0035-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,05344 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և 06-006-0035-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,053 հեկտար բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

3. Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Առափնյա փողոցում գտնվող, 06-006-0035-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,05344 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և 06-006-0035-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,053 հեկտար բնակելի կառուցապատման գործառնական նշանակության մակերեսով հողամասերի վրա ինքնակամ կառուցված 281,70 քառակուսի մետր մակերեսով մառանը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք. Սպիտակ, Առափնյա թաղամաս, 180 բնակելի տուն» հասցեն:

5. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Լիպարիտ Թորգոմի Դարչինյանի սեփականության իրավունքը:

6. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

7. Լիպարիտ Թորգոմի Դարչինյանին ՝

1) համայնքի բյուջե վճարել 429 500 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ՝ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 892

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՊԵՏԱՑ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇՈՂԵՐ ՌԱՖԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ԱՐՏԱՎԱԶԴ ՂԱԶԱՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 13012015-06-0017 վկայականը և Շողեր Ռաֆիկի Առաքելյանի (ծնված՝ 24.05.1961թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Շողեր Ռաֆիկի Առաքելյանին, Արտավազդ Ղազարի Կարապետյանին, Կարինե Արտավազդի Կարապետյանին և Մարինե Արտավազդի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի «ք. Սպիտակ, Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց 3-րդ փակուղի 8 բնակելի տուն» հասցեում գտնվող 06-006-0173-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0099 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող 78,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 893

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-075-0139-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՎ 06-075-0139-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդենթակետով, 31-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի թիվ 904-Ն որոշումը, Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 836 որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06075PKJM76F) ՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-075-0139-0013 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,03194 հեկտար մակերեսով և 06-075-0139-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,18389 հեկտար մակերեսով ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության հողամասերը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված միավորված անշարժ գույքի հատակագիծը և տրամադրել «Սպիտակ գյուղ Մեծ Պարնի, 12-րդ փողոց, 61 հողամաս» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 894

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Գայանե Մելիքի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Մուրացան փողոցում գտնվող, 06-006-0440-0036 կադաստրային ծածկագրով 0,04840 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան և աստիճանահարթակի, 2009 թվականին կառուցված թռչնանոցի, սանհանգույցի, պարսպի և ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2457928 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022JZ9X9Y, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Գայանե Մելիքի Քոչարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գայանե Մելիքի Քոչարյանին (ծնված՝ 06.08.1969թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի «Մուրացան փողոց, թիվ 2» հասցեում գտնվող, 06-006-0440-0036 կադաստրային ծածկագրով 0,04840 հա մակերեսով հողամասի վրա

ինքնակամ կառուցված 75,05 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 6,62 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 15,52 քառակուսի մետր մակերեսով թոչնանոցը, 4,39 քառակուսի մետր մակերեսով սանհանգույցը, 1,57 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 1,74 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 1,92 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և 16,88 քառակուսի մետր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ Գայանե Մելիքի Քոչարյանի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Գայանե Մելիքի Քոչարյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 185 460,6 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ՝ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2022թ. № 895

## ԱՍՏՂԻԿ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արփինե Պետրոսյանին 2022 թվականի նոյեմբերի 8-ից մինչև 2023 թվականի մարտի 27-ը ներառյալ տրամադրվել է հղիության և ծննդաբերության արձակուրդ, հիմք ընդունելով Աստղիկ Արշալույսի Կարապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի նոյեմբերի 22-ից Աստղիկ Արշալույսի Կարապետյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև Արփինե Պետրոսյանի հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտը, բայց ոչ ավելի քան տնօրենի թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 110 000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:
3. Աստղիկ Արշալույսի Կարապետյանի համար սահմանվում է շաբաթական 5 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով:
4. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 18 » նոյեմբերի 2022թ. № 896

## ԼԵՌՆԱՆՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԵՎ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ 1-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Լեռնանցք բնակավայրի վարչական ղեկավար Գուրգեն Վարդանյանի զեկուցագիրը, 2022 թվականի նոյեմբերի 20-ին՝ Լեռնանցք բնակավայրի օրվա և Սուրբ Մինաս եկեղեցու օծման 1-ամյակի առթիվ կայանալիք մատաղօրհնության կազմակերպման նպատակով հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 49 960 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2022թ. № 897

## ԾԱՂԿԵՓՍԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Մայա Խաչատրյանի հոգեհանգստի արարողության համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 30 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2022թ. № 898

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0030-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ և 50-րդ կետերով, հիմք ընդունելով «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22122021-06-0043 վկայականը և Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի բաժանումից կամ միավորումից առաջացող հասցեի հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042Z6PPW52, 060429ERABYG), Ֆիրդուս Մաքսիմի Այվազյանի, Մաքսիմ Ֆիրդուսի Այվազյանի և Ջվարթ Վազգենի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ֆիրդուս Մաքսիմի Այվազյանին (ծնված՝ 21.04.1968թ.), Մաքսիմ Ֆիրդուսի Այվազյանին (ծնված՝ 17.06.1991թ.) և Ջվարթ Վազգենի Հարությունյանին (ծնված՝ 08.10.1969թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի 1-ին փողոցի վրա գտնվող առանձին գույքային միավորների բաժանված 0,08680 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ, գ. Լեռնավան, 1-ին փողոց, 5-րդ փակուղի 5/1 հողամաս» հասցեն, իսկ 0,14618 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և դրա վրա գտնվող 54 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրել «Սպիտակ, գ. Լեռնավան, 1-ին փողոց, 5-րդ փակուղի 5 անասնաշենք» հասցեն հասցեն (փոստային դասիչը՝ 1811):
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորների բաժանված անշարժ գույքերի հատակագծերը:
3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 21
ք.Սպիտակ